ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-21/6» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 30 մարտի 2021թ.

ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Աշոտ Բադալով

Հանձնաժողովի քարտուղար՝ Նելլի Աբովյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Հայկ Հովհաննիսյան, Արեգ Ափոյան

1. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-21/6» ծածկագրով ընթացակարգի N 2 չափաբաժնի մասով գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման մասին.

1.1 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-21/6» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնման ընթացակարգի հրավերը և հայտարարությունը 18.03.2021թ. հրապարակվել է www.armeps.am կայքում, ինչպես նաև www.gnumner.am կայքում:

1.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացվել են 2021 թվականի մարտի 25-ին, ժամը՝ 11:00-ին armeps համակարգի միջոցով: ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար 2021թ.-ի ընթացքում տպագրական ծառայությունների ձեռքբերման նպատակով՝ գնանշման հարցման միջոցով էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-21/6» ծածկագրով ընթացակարգի 25 մարտի ժամը՝ 11:00-ի բացման նիստում հանձնաժողովը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5)-րդ ենթակետով, թիվ 2 արձանագրությամբ որոշեց՝ N 2 չափաբաժնի մասով նիստը կասեցնել և «Վառմ» ՍՊԸ-ին, «Յասոն» ՍՊԸ-ին, «Դասո պրինտ» ՍՊԸ-ին և «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

1.3 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-21/6» ծածկագրով գնանշման հարցման ձևով ընթացակարգի միաժամանակյա բանակցությունների նիստը տեղի է ունեցել 25.03.2021 թվականին ժամը 11:00-ին, ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության մասնաշենքում՝ ք.Երևան, Արշակունյաց-63 հասցեում: Միաժամանակյա բանակցությունների նիստին ոչ մի մասնակից չէր ներկայացել, սակայն մինչ բանակցությունների վարման նիստը «Վառմ» ՍՊԸ-ն էլեկտրոնային եղանակով ներկայացրել էր նոր նվազեցված գնային առաջարկ, որը ներկայացնում ենք ստորև.

Չափաբաժին	Անվանում	Մինչև բանակցությունները սկսելը նվազագույն գնային առաջարկ, ներառյալ ԱԱՀ (ՀՀ դրամ)	Ընտրված մասնակիցը և նվազեցված գնային առաջարկը (ՀՀ դրամ)			
			Մասնակցի անվանում	Նվազեցված գնային առաջարկ		
				Արժեք	ԱԱՀ	Գին
2	Մատյանների տպագրություն	974820	«Վառմ» ՍՊԸ	750000	150000	900000

2. ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար 2021թ.-ի ընթացքում տպագրական ծառայությունների ձեռքբերման նպատակով, գնանշման հարցման միջոցով, էլեկտրոնային եղանակով կազմակերպած «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-21/6» ծածկագրով ընթացակարգի N 2 չափաբաժնի գնահատման արդյունքում հանձնաժողովը որոշեց՝

2.1 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-21/6» ծածկագրով գնման ընթացակարգի՝

N 2 չափաբաժնի մասով ընտրված (հաղթող) մասնակից ճանաչել «Վառմ» ՍՊԸ-ին, քանի որ վերջինիս գնային առաջարկը ցածր է և չի գերազանցում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

2.2 Հաստատել «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-21/6» ծածկագրով գնման ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

2.3. «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով՝ ընտրված մասնակիցների հետ կնքել գնման պայմանագրեր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հաձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Բաղալով

Քարտուղար՝ ---------- Ն. Աբովյան

Գնահատող անդամներ

1 ---------- Հ. Հովհաննիսյան

2 ---------- Ա. Ափոյան